Արձանագրություն 4
ՀՀ հաշվեքննիչ պալատի կարիքների համար կազմակերպված «ՀՊ-ԲՄԾՁԲ-01/26» ծածկագրով բաց մրցույթ գնման ձևով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 09.01.2026թ. ժամը 10:00-ին:

Протокол №4
Заседание комиссии по вскрытию заявок на предварительную квалификацию в рамках процедуры срочного открытого конкурса на закупку под кодом «ՀՊ-ԲՄԾՁԲ-01/26» для нужд Счетной палаты Республики Армения.

Заседание оценочной комиссии состоялось 09.01.2026 в 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ

Նաիրա Պետրոսյան -Հաղորդակցության և Արարողակարգի բաժնի գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի անդամներ

Ծովինար Բեդիրյան -Ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ

Աննա Ալեյան -Հաղորդակցության և Արարողակարգի բաժնի մասնագետ

Անի Կարապետյան -Անձնակազմի և կորպորատիվ մշակույթի բաժնի բարևարքության հարցերով կազմակերպիչ

Գնումները համակարգող (հանձնոժողովի քարտուղար)՝ Աննա Անանյան

Присутствовали:
Председатель комиссии:
Наира Петросян-Главный специалист отдела коммуникации и протокола.
Члены комиссии:
Цовинар Бедирян-Главный специалист финансово-экономического отдела.
Анна Алеян-Специалист отдела коммуникации и протокола.
Ани Карапетян-Организатор по вопросам этики отдела кадров и корпоративной культуры.
Секретарь комиссии (координатор закупок):
Анна Ананян

Օրակարգ
Повестка заседания:

Հայտերի գնահատման նիստի մասին
Общая информация о заседании

1. ՀՀ հաշվեքննիչ պալատի կարիքների համար կազմակերպված «ՀՊ-ԲՄԾՁԲ-01/26» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում Ա/Ձ Սոնա Վարուժանի Նավասարդյանը սահմանված ժամկետում շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը և ներկայացրել է դիպլոմի, ինչպես նաև նախկինում կատարված նմանատիպ պայմանագրի արտատպված տարբերակը՝ էլեկտրոնային փոստի միջոցով:

1. В рамках процедуры закупки с кодом «ՀՊ-ԲՄԾՁԲ-01/26», организованной для нужд Счетной палаты РА, ИП Сона Варужан Наварсардян в установленный срок устранила несоответствие, зафиксированное оценочной комиссией, и представила копию диплома, а также распечатанную версию ранее выполненного аналогичного договора посредством электронной почты.

2. Ուսումնասիրելով Ա/Ձ Սոնա Վարուժանի Նավասարդյանի կողմից ներկայացված հայտը և հիմք ընդունելով հրավերով սահմանված գնահատման չափանիշները՝ գնահատող հանձնաժողովը արձանագրեց հետևյալը.

2. Изучив заявку ИП Сона Варужан Наварсардян и исходя из критериев оценки, установленных в приглашении, оценочная комиссия зафиксировала следующее:

2.1. «Մասնագիտական փորձառություն» չափանիշ

Հրավերի 2.4 կետում որպես նախկինում կատարված նմանատիպ պայմանագիր սահմանված է, որ նախկինում կատարված պայմանագիրը գնահատվում է նմանատիպ, եթե դրա շրջանակներում մատուցված ծառայության ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ սույն ընթացակարգի գնման գնից: Ընդ որում՝ նմանատիպ պայմանագիրը պետք է իրականացված լինի ՀՀ պետական գնումների մրցութային ընթացակարգով՝ գանձապետական պատվիրատուի համար:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ է համարվում ՀՀ պետական գնումների համակարգում պատվիրատուի կողմից գնումների համակարգողի ծառայությունների մատուցման պայմանագիրը:

Սակայն Ա/Ձ Սոնա Վարուժանի Նավասարդյանի կողմից ներկայացված՝ որպես նախկինում կատարված նմանատիպ պայմանագրի շրջանակներում մատուցվել են

ֆինանսական, հաշվապահական և գնումների կազմակերպման և համակարգման խորհրդատվական ծառայություններ:

Ներկայացված պայմանագրում որևէ ձևով առանձնացված չէ գնումների համակարգողի ծառայությունների քանակը կամ չափը՝ գումարային արտահայտությամբ, ինչը Հրավերի 2.4 կետի պահանջով պետք է լիներ առնվազն սույն ընթացակարգի գնման գնի չափով և հնարավորություն տար գնահատող հանձնաժողովին գնահատելու նմանատիպության չափորոշիչը:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատել 10 միավոր:

2.1. Критерий «Профессиональный опыт»

В пункте 2.4 Приглашения в качестве ранее выполненного аналогичного договора установлено, что ранее выполненный договор оценивается как аналогичный, если объем предоставленных услуг в его рамках в денежном выражении не меньше стоимости закупки по данной процедуре. При этом аналогичный договор должен быть реализован по процедуре государственных закупок РА для казначейского заказчика.

В рамках настоящей процедуры аналогичным считается договор, предусматривающий предоставление услуг по организации и координации закупок для заказчика в системе государственных закупок РА.

Однако в представленной ИП Сона Варужан Наварсардян заявке, представленная в качестве ранее выполненного аналогичного договора, были предоставлены финансовые, бухгалтерские и консультационные услуги по организации и координации закупок.

В представленном договоре никаким образом не выделено количество или объем услуг по должности координатора закупок в денежном выражении, что по требованиям пункта 2.4 Приглашения должно быть не меньше стоимости закупки по данной процедуре и позволяло оценочной комиссии определить критерий аналогичности.

Исходя из вышеизложенного, оценочная комиссия решила присвоить критерию «Профессиональный опыт» оценку 10 баллов.

2.2. «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշ

Հրավերի 2.4 կետով «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի գնահատման կարգով սահմանված է, որ աշխատակազմում պետք է ներգրավված լինի առնվազն 2 գնումների լիցենզավորված մասնագետ՝ առնվազն 2 տարվա պետական կառավարման համակարգի մասնագիտական աշխատանքային փորձով:

Ելնելով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատել 30 միավոր:

2.2. Критерий «Рабочие ресурсы»

Согласно пункту 2.4 Приглашения, порядок оценки критерия «Рабочие ресурсы» предусматривает, что в составе команды должны быть задействованы как минимум 2 лицензированных специалиста по закупкам с не менее чем 2-летним профессиональным опытом работы в системе государственного управления.

Исходя из изучения представленных документов, оценочная комиссия решила присвоить критерию «Рабочие ресурсы» оценку 30 баллов.

2.3. Գնային պայման

Հրավերի 2.4. կետով պահանջվել է նաև, որ *«գնային առաջարկը անհրաժեշտ է ներկայացնել առանձին ծրարով, որի վրա պետք է գրված լին «գնային առաջարկ», «չբացել մինչև գնային առաջարկների բացման նիստը» և մասնակցի անվանումը բառերը և գնային առաջարկի ծրարը պետք է դրված լինի ընդհանուր հայտի ծրարի մեջ որը կբացվի միայն մասնակցի որակավորման պայմանները դրական գնահատվելու դեպքում, իսկ դրական է համարվում, եթե մասնակցի որոկավորման չափորոշիչները /բացառությամբ գնային առաջարկի/ կգնահատվի առնվազն 50 միավոր: Վերոնշված պայմաններին չբավարարող հայտերը ենթակա են մերժման»*:

Ա/Ձ Սոնա Վարուժանի Նավասարդյանի կողմից ներկայացված գնային առաջարկը չի ներկայացվել առանձին ծրարով, այլ դրված է եղել ընդհանուր հայտի փաթեթում:

Գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ Ա/Ձ Սոնա Վարուժանի Նավասարդյանի հայտը **չի համապատասխանում** հրավերով սահմանված պահանջներին՝ մասնավորապես գնային առաջարկի ներկայացման ձևի պահանջին:

2.3. Ценовое предложение

Согласно пункту 2.4 Приглашения, также требовалось, чтобы:
«Ценовое предложение должно быть представлено в отдельном конверте, на котором обязательно должны быть указаны слова «ценовое предложение», «не открывать до заседания по раскрытию ценовых предложений» и наименование участника, а конверт с ценовым предложением должен быть вложен в общий пакет заявки, который раскрывается только в случае положительной оценки условий квалификации участника, при этом положительной считается оценка, если показатели квалификации участника (за исключением ценового предложения) составляют не менее 50 баллов. Заявки, не соответствующие указанным требованиям, подлежат отклонению».

Заявка ИП Сона Варужан Наварсардян не была представлена в отдельном конверте, а находилась в составе общего пакета заявки.

Оценочная комиссия зафиксировала, что заявка ИП Сона Варужан Наварсардян **не соответствует требованиям,** установленным в Приглашении, в частности по форме представления ценового предложения.

2.4 Առաջնորդվելով Հրավերի 2.4 կետի պահանջով, այն է՝

«Հայտը ներկայացնելիս գնային առաջարկը անհրաժեշտ է ներկայացնել առանձին ծրարով, որի վրա պետք է գրված լինեն «գնային առաջարկ», «չբացել մինչև գնային առաջարկների բացման նիստը» և մասնակցի անվանումը, և գնային առաջարկի ծրարը պետք է դրված լինի ընդհանուր հայտի ծրարի մեջ, որը կբացվի միայն այն դեպքում, երբ մասնակցի որակավորման պայմանները գնահատվեն դրական, իսկ դրական է համարվում, եթե մասնակցի որակավորման չափորոշիչները (բացառությամբ գնային առաջարկի) գնահատվեն առնվազն 50 միավոր: Վերոնշյալ պայմաններին չբավարարող հայտերը ենթակա են մերժման», հիմք ընդունելով սույն արձանագրության 2.3 կետը և այն փաստը, որ մասնակցի որակավորման չափորոշիչները գնահատվել են 40 միավոր՝

Գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ Ա/Ձ Սոնա Վարուժանի Նավասարդյանի հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, և հետևաբար՝ հայտը ենթակա է մերժման:

2.4. Руководствуясь пунктом 2.4 Приглашения

«При представлении заявки ценовое предложение должно быть представлено в отдельном конверте, на котором обязательно должны быть указаны слова «ценовое предложение», «не открывать до заседания по раскрытию ценовых предложений» и наименование участника, а конверт с ценовым предложением должен быть вложен в общий пакет заявки, который раскрывается только в случае положительной оценки условий квалификации участника. Положительной считается оценка, если показатели квалификации участника (за исключением ценового предложения) составляют не менее 50 баллов. Заявки, не соответствующие указанным требованиям, подлежат отклонению», Исходя из пункта 2.3 настоящего протокола и факта, что показатели квалификации участника составили 40 баллов-

Оценочная комиссия зафиксировала, что заявка ИП Сона Варужан Наварсардян не соответствует требованиям, установленным в Приглашении, и следовательно, заявка подлежит отклонению.

3. Ուսումնասիրելով «Գարիկ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և հիմք ընդունելով հրավերով սահմանված գնահատման չափանիշները՝ գնահատող հանձնաժողովը արձանագրեց հետևյալը.

3. Изучив заявку, представленную ООО «Гарик Груп», и исходя из критериев оценки, установленных в Приглашении, оценочная комиссия зафиксировала следующее:

3.1 «Մասնագիտական փորձառություն» չափանիշ

Հրավերի 2.4 կետում որպես նախկինում կատարված նմանատիպ պայմանագիր սահմանված է, որ նախկինում կատարված պայմանագիրը գնահատվում է նմանատիպ, եթե դրա շրջանակներում մատուցված ծառայության ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ սույն ընթացակարգի գնման գնից: Ընդ որում՝ նմանատիպ պայմանագիրը պետք է իրականացված լինի ՀՀ պետական գնումների մրցութային ընթացակարգով՝ գանձապետական պատվիրատուի համար:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ է համարվում ՀՀ պետական գնումների համակարգում պատվիրատուի կողմից գնումների համակարգողի ծառայությունների մատուցման պայմանագիրը:

Ելնելով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատել 40 միավոր:

3.1. Критерий «Профессиональный опыт»

В пункте 2.4 Приглашения в качестве ранее выполненного аналогичного договора установлено, что ранее выполненный договор оценивается как аналогичный, если объем предоставленных услуг в его рамках в денежном выражении не меньше стоимости закупки по данной процедуре. При этом аналогичный договор должен быть реализован по процедуре государственных закупок РА для казначейского заказчика.

В рамках настоящей процедуры аналогичным считается договор, предусматривающий предоставление услуг по организации и координации закупок для заказчика в системе государственных закупок РА.

Исходя из изучения представленных документов, оценочная комиссия решила присвоить критерию «Профессиональный опыт» оценку 40 баллов.

3.2. «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշ

Հրավերի 2.4 կետով «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի գնահատման կարգով սահմանված է, որ աշխատակազմում պետք է ներգրավված լինի առնվազն 2 գնումների լիցենզավորված մասնագետ՝ առնվազն 2 տարվա պետական կառավարման համակարգի մասնագիտական աշխատանքային փորձով:

Ելնելով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատել 30 միավոր:

3.2. Критерий «Рабочие ресурсы»

Согласно пункту 2.4 Приглашения, порядок оценки критерия «Рабочие ресурсы» предусматривает, что в составе команды должны быть задействованы как минимум 2 лицензированных специалиста по закупкам с не менее чем 2-летним профессиональным опытом работы в системе государственного управления.

Исходя из изучения представленных документов, оценочная комиссия решила присвоить критерию «Рабочие ресурсы» оценку 30 баллов.

3.3. Գնային պայման

Հրավերի 2.4 կետով սահմանված է, որ *մասնակիցների ֆինանսական առաջարկներին տրվող միավորները հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝*

ԳՄ= ՆԳ X 100/ԳԳ,

որտեղ՝

ԳՄ-ն գնային առաջարկին տրվող միավորն է,

ՆԳ-ն նվազագույն գինն է,

ԳԳ-ն գնահատվող մասնակցի առաջարկած գինն է,

Գնահատող հանձնաժողովը հաշվարկեց «Գարիկ Գրուպ» ՍՊԸ-ի ֆինանսական առաջարկին տրվող միավորը՝ ԳՄ =2 350 000X 100/2 400 000**=97,917**

3.3. Ценовое условие

Согласно пункту 2.4 Приглашения, баллы, присуждаемые за финансовые предложения участников, рассчитываются по следующей формуле:

ГМ = НГ X 100/ГГ,

где:

ГМ — это единица, указанная в предложении цены,

НГ — это минимальная цена,

ГГ — это цена, предложенная оцениваемым участником,

Оценочная комиссия рассчитала баллы за финансовое предложение ООО «Гарик Груп» следующим образом:

ГМ =2 350 000×100/2 400 000=97,917

3.4 Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը հաշվարկեց «Գարիկ Գրուպ» ՍՊԸ-ին տրվող ընդհանուր գնահատականը հետևյալ բանաձևով.

ՄԳ = (ԳՄ X 0.7) + (ՏԱ X 0.3),

որտեղ՝

ՄԳ-ն մասնակցին տրվող գնահատականն է,

ԳՄ-ն մասնակցի գնային առաջարկին տրված միավորն է,

ՏԱ-ն մասնակցի որակավորման հատկանիշներին և տեխնիկական առաջարկին տրված միավորն է.

ՄԳ = (97,917 × 0.7) + (70 × 0.3) = 89,55 միավոր:

3.4. Исходя из вышеизложенного, комиссия рассчитала общую оценку, присуждаемую ООО «Гарик Груп», по следующей формуле:

МГ = (ГМ X 0,7) + (ТА X 0,3),
где:
МГ — оценка, присвоенная участнику,
ГМ — оценка, присвоенная ценовому предложению участника,
ТА — оценка, присвоенная квалификационным характеристикам и техническому предложению участника.
Выбранным участником считается участник, набравший наибольшее количество баллов (МГ).

Рассчитанная общая оценка участника ООО «Гарик Груп»:

МГ = (97,917 × 0.7) + (70 × 0.3) = 89,55 баллов.

4. Ղեկավարվելով հրավերի 2.4 կետով և սույն արձանագրության 2-րդ և 3-րդ կետերով՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը **որոշեց.**

ա/ Մերժել Ա/Ձ Սոնա Վարուժանի Նավասարդյանի կողմից ներկայացված հայտը,

բ/ «ՀՊ-ԲՄԾՁԲ-01/26» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Գարիկ Գրուպ» ՍՊԸ-ին,

գ/ Հայտարարել 10-օր անգործության ժամկետ, որի ավարտից հետո սահմանված կարգով ընտրված մասնակցին առաջարկել կնքել համապատասխան պայմանագիր:

4. Руководствуясь пунктом 2.4 Приглашения и пунктами 2 и 3 настоящего протокола, в соответствии с требованиями законодательства Республики Армения о закупках, комиссия постановила:

а) отклонить заявку, представленную ИП Сона Варужан Наварсардян;

б) признать выбранным участником процедуры закупки с кодом «ՀՊ-ԲՄԾՁԲ-01/26» ООО «Гарик Груп»;

в) объявить 10-дневный период бездействия, по истечении которого в установленном порядке предложить выбранному участнику заключить соответствующий договор.

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0
Принято решение: «за» – 4, «против» – 0.

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Председатель комиссии по оценке		Նաիրա Պետրոսյան Наира Петросян
Հանձնաժողովի անդամներ՝ Члены комиссии`		Ծովինար Բեդիրյան Цовинар Бедирян
		Աննա Ալեյան Анна Алеян
		Անի Կարապետյան Ани Карапетян
Գնումները համակարգող Координатор закупок		Աննա Անանյան Анна Ананян